



ՀԱՆՂԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



ՏՆՕՐԻՆ

ՏՕՐԹ. Յ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

( Ա. ՏԱՐԻ )

15 ԱՊՐԻԼ 1900

( ԹԻԻ 3 )



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արատասեմանի հայ եկեղեցին, Երուանդ Սրմաքէշխանկան. — Ծօփօլան, (բարեգեան Կոնիերեան) Ազախ. — Գիտական արձագանգ, (Երբրե) Յ. Ս. Փափազեան. — Մահուան զգայնութիւններ, (Կերիսառ) Զեփիւռ. — Կաղընդ-չէք (Լեյլ!) Ե. Սրմաքէշխանկան. — ձերմակ հարս (ածնո) Արամ. — Օրուան զպաւորութիւններ, Կրօն Մեքայէլեան. — Մեր որբերը:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

„ՇԱԻԻՂ”

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք •  
Արտասահմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք •  
Ամերիկայի » » 2 1/2 տոլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր •

Առաջին քիւր ստացող եւ ետ չդարձնողը բաժանորդ  
կը նկատուի •

Բաժնեգին եւ գրամ ղրկել ՄԻՍՅՆ հետեւեալ հասցէին

D' H. S. PAPA ZIAN

VARNA

Իսկ նամակ, յօդուած եւ թերթ ղրկել հետեւեալ հասցէին •

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

Varna

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան •

# Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԳԻՄ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

15 ԱՊՐԻԼ 1900

Թիւ 3

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուսատրչին խորանը վաղընջաց  
ի վեր կանգնուած կը գտնուի Հա-  
յաստանի հորիզոնէն դուրս, օտար  
երկիրներու տակ: Կրօնքի մեր  
պապենական խանդավառութիւնը,  
զոր սերունդները դուրդուրանքով  
իրարու հաղորդած են նուիրական  
ու թանկագին կտակի մը պէս և  
որ իր խոյանքին ուժգնութիւնը  
պահած է միշտ ցեղին չարչարալից  
չարունակութեանը մէջ իսկ, դար-  
բեր առաջ արդէն հայկական  
առօրին կառուցումովը արտա-  
յայտուած է աշխարհի զանազան  
մասերուն մէջ ալ, իր հովանիին  
տակ պատուպարելու համար հայրե-  
նիքին խունկէն ու մամէն տարա-  
մերժուած դժբախտ հայր: Օտար  
աշխարհներու ովկէանին մէջ գրեթէ  
կորսուող այդ խորհրդանշանները  
հայ կրօնքին՝ հզոր մագնիսներ եղած  
են դէպ իրենց քաշելու համար հա-  
յը, զոր ամբխը՝ իր հսկայ ծիսա-  
րին մէջ՝ շարունակ կը քշէ կը տա-

նի հեռուները և որ սակայն միշտ  
կը յաջողի ետ դառնալ, որչափ ա-  
տեն որ իր ուժերը կարենան տա-  
կալ այդ սպառող ու անդադրում  
պայքարին:

Եթէ այսօր արտասահմանի զա-  
նազան մասերուն մէջ կը նշմարենք  
հազուադիւր նշխարներ հին հայ  
գաղթականութեանց, ասոնք ան-  
կասկածօրէն մեծ նաւակածութեան  
այն ողջ մնացողներն են որոնք՝ դե-  
րագոյն վայրկեանին՝ յաջողած են  
պլլուիլ փրկութեան միակ ամուր  
գերանին, հայ առօրին վե-  
մերուն:

Հայ եկեղեցին, միս մինակը,  
լուռ ու մունջ, թշնամիներէ պա-  
շարուած հերոսի մը աննկուն դի-  
մացկնութեամբը, դարերով կռիւ  
մղած է չորս կողմէն խուժող օտար  
հասանքներուն դէմ, միեւնոյն ժա-  
մանակ պաշապանելով իր զուակները,  
հատիկ հատիկ միայն աալով զա-  
նոնք, և վերջապէս բուն մը պահե-  
լով իրեն իր մխիթարութեանը հա-  
մար:

Այս է պատճառը որ երբ հայկական մեծ գաղթականութիւնը, կոտորածներու անմուսնալի թուականին, արատասհման նետուեցաւ շնչապառ, հոն կանգուն գտաւ գեռ հայ խորանը՝ սգաւոր մենակեացի մը պէս որ իր կորուսած զուկներուն կակիծովը կը զօրոյ արցունքոտ ու կորագլուխ համակամութեամբ մը, և որուն շուրջը գեռ կը յածին տարտամ սուտերներ, կմախքներ գրեթէ՝ դարաւոր մաքառումէն հալումնաչ ու ոգեսպառ։ Ահագնազգորգ փոթորիկը երկար ու տաժանագին կոծանքներէ յետոյ նաւը առած տարած էր՝ նաւարկուներու մեծ մասին հեռ մէկտեղ, բայց խարիտը մնացած էր ծովուն յատակին կառչած՝ թոյլ և սակայն յամառ աատանումով մը . . .

\*  
\* \*

Ելեւոյթ մը, որ պահ մը եկաւ մէկդի առնել սկիպտիկ գաւա նանքներու կեղծ մորթը որուն տակ կը սոնգայ հիմա մեր նոր սերունդին կարեւոր մէկ մասը, պերճաբարբաւ կը բացատրէ գերը զոր եկեղեցին ու մեր եկեղեցին կառարած է ցեղերնուս ինքնապահպանութեան ծանրակշիռ ու կնճուալից գործին մէջ։

Ու և իցէ հայ որ արատասհմանի ու և է մէկ կէտին վրայ սաք կոխեց, իր առաջին հարցումը սա եղաւ գրեթէ .

— Հոս եկեղեցի ունի՞նք։

Ու հոն գիմեց, եթէ ունէինք։

Կրօնքի ու եկեղեցիի նկատմամբ ամենէն աւելի ցուրա ու անողբ նախապաշարումներով աղբորած հայն իսկ սրտին մէջ փոփանքի գահունակ յազում մը զգաց երբ սեսաւ հայ տաճարի մը գմբէթը որ կը յաւերժացնէր մեր նախնիքներուն պաշտելի հաւատքին խորհուրդը հեռաւոր օտարութեան մը մէջ, կամ սրտի բուռն սեղմում մը ունեցաւ երբոր չգտաւ այն միակ ապստանարանը, զոր թողած ըլլայ մեզ մարդկային ամբարշտութիւնը գարեթէ ի վեր և որուն նախնական անրանաբարելիութիւնն ալ օտանու կոխ եղաւ սակայն կարմիր գաղանին մտեկան ու սուտերամերկ յարձակումովը։

Ու շատ աեղեր, արատասհմանի մէջ, հայ գաղթականը սփոփանքն ունեցաւ գտնելու իր հինատուրց, ինկելի տաճարը, խոնարհ՝ բայց մղւած մեծ ու անշշուկ պայքարի մը երաշխէպներովը վեհապանծ։

\*  
\* \*

Մեր եկեղեցին ոչ միայն քրիստոնէութեան միտաբ ոգիին մըլտարծարծ վաւարանն է, հապանաեւ տեսակ մը անկործան աւանդարանը մեր հին գիւցազներգական կեանքին, որուն ներուժ ազգեցութիւնը մեր նախնիքը մղած է

դայութեան մեծ կռիւին և ներկայ  
 ու ապագայ սերունդներուն վրայ  
 պիտի ըլլայ միակ հաւաստիքը նոյն  
 ազնիւ ու ասպետական պայքարին  
 անդուլ յարատեւմանը՝ աւելի՛ ծա-  
 նրր պայմաններու տակ, աւելի՛  
 անձկալից ճգնաժամերու պահուն :

Ստրկութեան մեր այս սղբագին  
 վիճակին մէջ, գաղափարական ըմ-  
 բրունումով մը կարծես մեր հայրենի-  
 քը եկած խաղաղ է հայկական տա-  
 ճարին լայնախորիստ որմերուն և  
 աին, ուր կարելի է անվախօրէն  
 շարժիլ, գործել, խօսիլ, վայրկե-  
 նական ազատութեան մը պտարան-  
 քին գինովութիւնը վայելել, մեր  
 այս ընդհանուր ցրուածութեան մէջ՝  
 տուներնիս կամ հայրենիքի օճախ-  
 նոս անկիւնը անքոյթ ու անկաշ-  
 կանդ միաւորման մը խաբուսիկ դա-  
 ղափարին ասքութիւնը ըմբոշինել :

Անմիա սճիւր մը կըլլար կրօնքին  
 անբունարարելի մենաշնորհովը մեզ  
 պարգեւուած այս միակ հանդրուա-  
 նը զոհել անտարբերութեան շար-  
 ժումի մը կամ անհեռատես ու  
 ախմար տրամաբանութեան մը, վար-  
 ուելով ընկերաբանական այնպիսի  
 սկզբունքներէ որոնք՝ կաղմակեր-  
 պուած ազգերու համար գերազան-  
 ցապէս օգտաւէտ, կործանարար  
 պիտի ըլլային մեզ՝ մեր արգի ան-  
 կերպարան կացութեան մէջ :

Ուստի ջերմեռանդ ուխտաւորի  
 մը հոջ հաւատքովը փարինք հա-  
 յասանեայց եկեղեցիին, որուն

գմբէթին տակ կը պահուի մեր ազ-  
 դայնութեան մեծագոյն խորհրդա-  
 նշանը, ու ճիգերնիս միացնենք որ  
 անիկա մանաւանդ կանգուն մնայ  
 արտասահմանի մէջ, ուր այսօր  
 սաուար հայութիւն մը կայ ցանու-  
 ցիր ու թափառական, մեծ ու հզօր  
 ազգերու հոսանքներէն շրջապատ-  
 ուած, այլատերութեւ և փճանալու  
 վերահաս վտանգին գէմ ապաւէն  
 ունենալով գլխաւորապէս լու-  
 սաւորչին խորանը, որուն առջեւ  
 կերթայ երկրպագել խորհելու հա-  
 մար սչ միտյն Աստուծոյ, հապա-  
 նաւեւ ազգին վրայ :

Երուանդ Մումախեփանլեան

“ ՇՕՐՕԼԱ ”

(ԲԱՐԻՁԵԱՆ ՆՈԹԵՐԷՍ)

Կանգնագեղ հասակ մը նոճիի պէս  
 նուրբ ու նիհար, ազնուականի դա-  
 րավերջիկ ձեւեր, համակրելի եւ յան-  
 կուցիչ խօսուածք մը, քաղաքավար,  
 ուշիմ եւ պարկեշտ. ահա նկարագրին  
 մէկ քանի գիծերը գծբախտ Սէփուրին  
 որ ֆիլիպպեաններու մէկ փայլուն  
 նմոյշն էր :

Սպանիացի հարուստ ընտանիքի մը  
 զաւակը, Հայթիի մէջ officier de santé,  
 Բարիզ եկած էր մեր վարժարանին  
 դասընթացքին հետեւելու համար :

Բաւական լաւ ֆրանսերէն կը խօ-  
 սէր եւ հեղաբարոյ ու աշխատասէր

ըլլալուն վարժարանին մէջ առաջին օրէն իսկ ամենէն ալ սիրուեցաւ:

Միայն իր արդուզարդը քիչ մը եւ զական հանգամանք մը ունէր. բաց-գոյն հագուստ մը եւ շատ կարմիր փողկապ մը իր դէմքին հետ տարօրինակ ու աչքի զարնող հակադրութիւն մը կը ձուացնէին:

Իր թուխ, յղկուն ու միապաղաղ մորթը ինծի կը յեշեցնէր Պոլսոյ ներքինիները որոնք դաժան երեւոյթ մը կուսննան, բարկութեամբ միշտ զեզուն եւ սաստեղու պատրաստ, մինչեւ Սէփուրին դէմքը պարզ ու վճիտ էր եւ երբ վարժարանին սեմին վրայ իր առաջին քայլերը դրաւ, ուսանողները զինքը մկրտեցին օօօլա անունով:

Մակդիր գնելու սովորութիւնը մեր վարժարանին մէջն ալ կար, այնպէս որ տնօրէնէն սկսած մինչեւ աշակերտները ու յետին պաշտօնեան աւելի կամ նուազ վերաւորիչ անունով մը կը ճանչցուէին, բան մը որուն համար ոչ ոք կը գանգատէր, ինչպէս նաեւ ես որ Բօչֆօր կը կոչուէի՝ այդ անունին տիրոջը հետ ճակատիս եւ մազերովս նմանութիւն մը ունենալու համար: Սակայն Սէփուր չախորժեցաւ իր նոր անունէն եւ կրնաքահայր ընկերները անախորժ տպաւորութիւն մը ըրին իր վրայ:

Թէեւ առաջին օրերուն մէջ գանգատելու համարձակութիւնը չէր ունեցած եւ միայն ժպիտով մը կը պատասխանէր իր նոր յորջորջումին, սակայն մէկ քանի շաբաթ յետոյ այնպիսի մեղմ դիտողութիւններ կընէր մեզ որ կարծես զգացնել կուզէր թէ իր մորթին սեւ գոյնը յանցանք մը չէր եւ պէտք չէր որ զինքը ծաղրէինք:

Ի զուր եղան մեր բացատրութիւն-

ները, սովորութիւնը յարգելու խնդրանքը եւ չվշտանալու հրաւէրը. Սէփուր անդրգուելի մնաց. միշտ զինքը տխուր կը տեսնէինք եւ օր օրի վիշտը կ'աւելնար:

Ընկերները տրամադիր չէին ըմբռնելու այդ զգայուն սեւամորթին դժգոհութիւնները, բայց ես՝ իրեն նման օտարական մը՝ զգացի անոր հոգեկան վիճակին անտանելիութիւնը, ծննդավայրէ ու ծնողքէ զրկուածի մը ամբողջ դառնութիւնները, ուստի որոշեցի՝ իմ մասիս՝ մակդիրի այդ գործածութիւնը վերցնել եւ բուն անունովը միայն կոչել զինքը:

Քանի մը օր ետքը ա՛լ լաւագոյն բարեկամներ դարձած էինք. վիճակնիս, մտածումնիս, անձկութիւննիս իրարու կը պատմէինք. ու այնքան յարեցայ իրեն որ շատ անգամներ կը վախնայի ճաշարանին մէջ օօօլա-յով պատրաստուած անուշեղէն մը ուտել եւ նոյն իսկ այդ անունը արտասանել:

Միասին պոռոյաներ, զուարճութիւններ եւ շահատակութիւններ կընէինք ու միշտ կը զգուշանայի Շ ով սկսուած բառերը անգամ գործածելու:

Քարթիէ Լաթէնի մէջ այդ օրերը տարօրինակ յուզում մը կար. ուսանողները կը պահանջէին որ թատրոններու անօրէնները կարեւոր գեղջ մը ընեն իրենց գիներուն վրայ ուսանողներուն դերամատչելի դարձնելու համար ներկայացումները, ու մերժուած էին:

Ժողովներ, միթիւններ, բողոքներ, ցոյցեր անօգուտ ըլլալէ զատ խնդրին ա՛լ աւելի ծանր հանգամանք մը տուած էին, այնպէս որ վերագոյն միջոցի մը հարկ էր դիմել. ասկէց ծնունդ

առաւ Բարեղի մէջ խառնակութիւն սփռելու գաղափարը:

Ես ու Սէփուր, անհանդարտ եւ յուզումն ու բարոսաութիւնը սիրող ազգերու հարազատ զաւակներ, միացանք այդ փորձին եւ Պիւլիէի մէջ 3-4000 հոգիներու ժողովին ներկայ գտնուելէ ետք՝ ջաներով, վերտառութիւններով փողոցները ինկանք ու Օտէննի առջեւ կարգ մը բաւեր կանչուըռտակել եւ ցոյցեր ընելէ յետոյ անցանք զէպ ի Օրէրա, անոր ալ տնօրէնները սուլելու եւ խայտառակելու համար:

Ոստիկանները ի զուր կը համոզէին մեզ որ ցրուինք, ամբոխը սեղմուած, գրգռուած եւ շարժուն մասկոյտի մը վերածուած՝ կը յառաջանար միշտ պոռալով, երգելով եւ չորս դին սարսափ սփռելով:

Օրէրայի ծառուղիին վրայ կը գրանուէինք երբ *conspuez!* ի աղաղակները սկսան եւ երգը փոխուելով « *ce n'est pas de la m... ça, c'est du chocolat* » ի յանկերգ շ կը կրկնուէր:

Սէփուր, խեղճ Սէփուրը որ մինչեւ այն ատեն թեւէս բռնած հետս կը քալէր որպէսզի չկորսնցնենք զերար, յանկարծ ձգեց զիս, սարսուռ մը եւ կաւ վրան, շրթունքները կը դողդրղային եւ ակոսները կը կափկափէին. ու ինկաւ քանի մը հոգիի վրայ:

Վայկենապէս գուրս նետուած էինք ամբոխին մէջէն. մեզի հրած, հրմըշտը կած եւ բռունցքներով մէկ կողմ վանած էին ու ցուցարարները առջեւնուս անդադար անցնելով կը կըրկնէին ռոֆօլա բառը:

Սէփուր՝ բարկութենէն կրակ կը տրած՝ ամենուէն երեսին *cochon* կը պոռար. իսկ ամբոխը՝ կարծելով որ սեւուկը ոտքի տակ գացած եւ կասողած

էր, ծիծաղներով եւ ռոֆօլա կրկնելով կը պատասխանէր:

Խեղճ տղան կարծած էր թէ երեք չորս հազար հոգի զինքը կը ծաղրեն եւ իր սեւութիւնը իր երեսին կը զարնեն՝ հրապարակային այդ արիւն-ուշտ պարսաւանքով:

Անկարելի եղաւ զինքը համոզել թէ երգ մըն էր այն եւ իրեն գպչող չի կար: Սէփուր այնքան վրդոված եւ յուզուած էր որ բան մը չէր լսեր իմ խօսքերէս եւ աչքերը խոշոր խոշոր բացած դեռ ականջ կը դնէր զինքը սարսափեցնող բառին որ երթալով կը կորսուէր ընդհանուր աղաղակներուն մէջ:

Կողմնակի փողոցներէն տուն դարձանք եւ այդ գիշերը հիւանդ պառկեցաւ:

Յաջորդ օրը վարժարանին մէջ չը տեսանք զինքը ու ես անխոհեմութիւնը ունեցայ ընկերներուս պատմելու Սէփուրի ծիծաղաշարժ պարագան:

Ա՛լ այնուհետեւ ռոֆօլա բառը մասնաւոր նշանակութիւն մը, կարեւորութիւն մը առաւ եւ ամէն օր կը կըրկնուէր կսկծակի յանկերգը:

Այդ զէպքէն ստանեակ օրեր ետքը առաւտ մը լուր տուին թէ Սէփուր հիւանդ էր: Վարժարանէն բժիշկ մը գնաց եւ զինքը փոխադրեցին հիւանդանոց:

Ժանատոտենդ մը Սէփուրի աղիքները կը գալարէր եւ 18 օր յետոյ Փիլլիպեան կղզիներուն այդ ալնիւ երիտասարդը հիւանդանոցին մէջ պատներեօին, ծնողքէ եւ հայրենիքէ հեռու, գուրգուրանքէ ու արցունքէ գուրկ՝ հոգին կաւանդէր:

Մահուան լուրը կայծակի նման

չանթահարեց մեզ, մենէ շատեր իր  
գանգատները, արտունջները սկսան  
յիշել և ցաւեցան որ յամառած էին  
զինքը՝ հակառակ կամքին՝ միշտ ճօօլա  
կոչել:

Ուսուցչական պատգամաւորութիւն  
մը և վարժարանին ամբողջ ուսանող  
ութիւնը հետեւեցաւ զագաղին մինչեւ  
Քանթէն և երբ հողին կը յանձնէին  
աշխարհն առոյգ և խոստմնալից  
երիտասարդ մը, բոլոր իր ընկերները  
յուզարկաւորներուն կը բաժնէին  
ճօօլա ծրարիկներ ի յիշատակ իրենց  
մեանող բարեկամին, որուն միակ  
վիշաբ ճօօլա կոչուիլը եղաւ, և  
գուցէ իր կորստեան ալ միակ շարժ  
ժամիթը:

Ա.ԶԱՆՍ

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԷՍՐԱՐԻՆ ՇՈՒՐՁԸ

Կայծակի մը արագութեամբ կու  
գեմ անցնիլ այս անգամուան նիւթիս  
վրայէն և ընթերցողներէս ալ  
կը խնդրեմ որ կարելի եղածին  
չափ շուտ, մէկ շունչով կարգան  
լմնցնեն զայն. վասն զի կրնայ ըլ  
լալ որ միայն ԵՄԱՐ բառը բաւա  
կան զօրութիւն ունենայ երազել  
տալու և կէս ճամբան ձգելու զիս՝  
որ քրտնիկա աւարտեմ և զիրենք՝  
մինչեւ վերջը շարունակելու ըն  
թերցումնին:

Ուրեմն կը ներկայացնեմ ձեզ

Էսրարը՝ իսաշխաշ, հաշիշ և գրեթէ  
աճիռն անունով ալ, պարզագէտ  
թոյն մը:

Սպանիական ծանօթացում մը  
եղաւ այս, երկար և բազմանուն.  
միայն կը պակսի DON բառը, զոր  
ուզողը կրնայ աւելցնել:

Գերեզմանի խնամիրներէն մէկն է  
ԵՄԱՐը և Եգիպտոսի մէջ շատ կը  
գործածուի, ինչպէս նաեւ կարգ  
մը առք կլիմաներու ներքեւ:

Ինչ որ է օլին Պալայ մէջ նոյն է  
հաշիշը փարսուոններու երկրին հա  
մարութեւ անգլիական թեւարկու  
թենէն ի վեր անոր գործածութիւ  
նը արգելքի և խիտա պատմի են.  
Թարկուած է, սակայն որովհետեւ  
մուլթիւնը օրէնքին լեզուէն չի  
հասկնար, խաշխաշի սիրահարներն  
ալ միշտ միջոցը գտած են գաղտնի  
տեղեր ունենալու, ուր կերթան ժա  
մերով երազելու, մաւրալու և եր  
գելու:

Մուխի և ճնշիչ մթնոլորտի ամ  
պերով ոլողուած սրահներ են ա  
նոնք, արեւերեան ճաշակով կահա  
ւորուած. կակուղ, լայն և ցած  
սօճաններ, գորգեր՝ գետինը և սե  
նեկին ամէն անկիւնները, մութ  
գոյն վարագոյրներ, ձեզունէն կտխ  
ուած եգիպտական եղեգէ խել մը  
զարդեր և պատին վրայ . . . մեր  
տուներէն վտարուած լպիրշ պատ  
կերներ:

Եգիպտոսի մէջ ամէն դասակարգ  
իր հաստատութիւնները ունի ուր

էսրարին գինն ալ կը տարբերի, 20 փարայէն մինչեւ 1 1/2 ֆրանք մէկ շունչը, առաջին շունչը ու է՛ն զօրաւորն է :

Օրուան մէջ հազուադէպ չէ սեւանել աժգոյն, վտիս և դանգաչող էակներ որոնք գլուխնին կախ, մտազբաղ և կարեւոր գործի մը գացող: անձկութեամբ՝ ստուերի մը նման քովէդ կանցնին անձայն և անշուկ երթալու, անհետանալու անձանօթ և հեռաւոր անկիւննեւրու մէջ :

Հաշիշամոլներն են ասոնք. խելասի մը անգիտակցութեամբը իրենց ծխարանները կը դիմեն՝ գաղտագողի անցքերէ և կիսբաց դռներէ ներս սողսկելով :

Քայլ մըն ալ և ահա սլահին մէջն են. շուտ մը ծխափողը կամ գլանիկը շրթունքներուն կը տանին, մէկ, երկու կը քաշեն ու կերկննան բազմացներուն վրայ, աչքերնին կէս գոց կէս բաց, ինքնամոռացութեան վիճակի մէջ, երեւակայութիւննին սրուած և առերեւոյթ երջանկութեան մը թեւերուն վրայ սաւառնած : Հոն վիշտը, զրկանքը, հաշիւը գոյութիւն չունին իրենց համար, վասն զի չեն զգար, չեն տանջուիր ու կորսնցուցած են ինքզինքնին :

Ժամեր կը անեն այսպէս և երազը հետզհետէ լայն համեմատութիւններով կը տարածուի, կը ճիւղաւորուի Էսրարի ոլորտ ոլորտ վեր

բարձրացող մութի կապտագոյն մթնոլորտին մէջէն :

Հրապուրիչ է այս վիճակը, չէ՞ սակայն թո՛յնը . . . . . :

Ի՞նչ ընելու է անջնաս դարձնելու համար այդ սճրագործ տարրը որ կուրծքերը կը փճացնէ, միտքերը կանդամայութէ և անարիւն, անզօր ու ախմար զանգուածի մը կը վերածէ ամբողջ գոյութիւնը մարդուն և զայն մովս մը նման կը հալեցնէ, կը հատցնէ. — ոչ ի՛նչ :

Եւրոպայի մէջ ալ՝ ուր ամենէն շատ գիտակցութիւնը կայ օգտակարին և փրատակարին, անթիւ էակներու դերի ըրած է իրեն : Լոնտոնայի և Բարիզի մէջ անձեր կան որոնք իրենց ունեցածներէն գժգո՛հ էսրարին աջակցութեանը դիմելու պէտքը զգացած են և տուած են ինքզինքնին խաբոսիկ և կեղծ արքայութեան մը կեանքին վայելքներուն զորս կը ստեղծէ աճիտներ ծխուելով կամ ծամուելով :

Հարստութեան և գիրքի տէր մարդիկ, գիւանազէտներ, գրագէտներ ու մանաւանդ կիս-աշխարհիկ կիներ սերտիւ կապուած են Էսրարի հրմայքներուն որոնք գիրենք շատ հեռուները կը տանին. ու ամէն օր կերթան ոստիկանութեան աչքէն հեռու անձանօթ վայրեր ուսկից ա մօթն իոկ դուրս փախած է շիկնոտ սոսկումով :

Մական ինչ որ կայ մութիտարական, սա է թէ միայն մարդիկ չեն

որ հարարք կը սիրեն . կենդանիներ  
ալ կան , հարարի գերի դարձող  
մարդոց նման ճաշակէ և զգացումէ  
զուրկ կենդանիներ որոնք խոտին  
չափ կը փնտռեն այդ թոյնը :

Արկաղեան սոխակն է ան , մեր  
գիտցած այն երկայնականջ , համ-  
բերատար և յամառ կենդանին  
որ ամէն օր որոշեալ ժամուն կըս-  
պասէ որ աէրը գինքը ծխտրան ասնի  
և առճիկը սայ , սպա թէ ոչ քա-  
լելը , գործելը և աշխատիլը իրեն  
համար տաժանելի կը դառնան ու  
կեցած տեղը գամուած կը կենայ  
որքան ժամանակ որ պէտքը տեսնէ :

Ֆէլահները ասիկա գիտնալով  
օրական 20 փարա յատկացուցած  
են իրենց ծխող գրասաններուն հա-  
մար և զանոնք սիրով ու համակեր-  
պող հլութեամբ մը կառաջնորդեն  
ծխարարին քով որ անմիջապէս է-  
չերուն կը ներկայացնէ նաւրկիցին  
ծխափողը և կը ձգէ որ մէկ երկու  
անգամ քաշին :


Ալ այնուհետեւ մնաս բարով  
ծուլութիւն և դանդաղութիւն . նոր  
ասպարէզ մը , գործունէութեան և  
ժրաջանութեան նոր աշխարհ մը կը  
բացուի իրենց առաջ և կը վազեն  
կերթան ուր որ մղուին :

Հիմա որ բաւական գաղափար մը  
տուինք հարարին վրայ , արդեօք  
ընթերցողներէս վառաբողներ պի-  
տի ըլլա՞ն — եթէ սակայն արդէն  
թմրած չեն — փորձ մը ընելու էս-


րարի թոյնովը որպէս զի հասկնան ,  
գիտնան անոր արդեցութիւնը :

Վստահ եմ որ այդ անխոհմնե-  
րը՝ հարարէն սգեւորութիւն սպա-  
սող արարածներուն կարգը պիտի  
համարուին . . . առողջապահու-  
թեան պայմաններուն հանդէպ :

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ



ՄԱՆՈՒԱՆ ԶԳԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ



Գոց փեղկերէն կէս-ըրս մը ներս կը հօսի .

Ո՞վ թըմբիբը տարտամութեան սրբաւոր . . .  
Արուած պատկերն , աղ-որ խորջ մը՝ մեկուսի ,  
ճառագայթով մը կը նայի սչքիս շոր :

Ո՞վ թըմբիբը տարտամութեան սրբաւոր . . .  
կիչնամ , յոգնած , քիւնիս մէջ թաւշակերտ .  
ճառագայթով մը կը նայի սչքիս շոր  
Մահը՝ գողցած հըրեշտակի ջինջ պատկերդ :

կիչնամ , յոգնած , քիւնիս մէջ թաւշակերտ .  
Ո՞վ հոգիիս սարսուտանջ սև սուգը .  
Մահը՝ գողցած հըրեշտակի ջինջ պատկերդ՝  
իս կը կանչէ , տեսնելով իմ արտասուքը :

Ո՞վ հոգիիս սարսուտանջ սև սուգը ,  
կէ-օքունի մէջ , մութ երազի ցընորբով .  
իս կը կանչէ , տեսնելով իմ արտասուքը ,  
Մայրը՝ սրուն սէրը տարու քեզ եր քով :

կէս-քունի մէջ, մեւթ երազի ցընորքով,  
կը գիտեմ շէջն ազօտ լոյսին ու կրակին.  
Մոյրը՝ որուն սէրը սարաւ քեզ իր քով՝  
Ըզգաց Տրճուանքն ոսկորներու ցըրտագին:

կը գիտեմ շէջն ազօտ լոյսին ու կրակին.  
Դագաղ մը կայ հոգիիս մէջ. մեռած սիրտ...  
Ըզգաց Տրճուանքն ոսկորներու ցըրտագին  
Ունայնութիւնն որով լի է դանկըս բիրտ:

Գոց փեղկերէն կէս-լոյս մը ներս կը հոսի:

ՋԵՓԻԻՌ



# Կ Ա Ղ Ո Ն Դ Չ Է Ք Ր

(Վ.Ի.ՊԱՆ.)

Վ.Պ.Բ.

Ինչամով ծալլելէ յետոյ թղթիկը  
որուն վրայ երկու տող գրած էր ան-  
զողզող ձեռքով՝ պահարանի մը մէջ  
սեղաւորեց զայն: Յետոյ, գետինը  
գրաւ նամակը, ծնրադրեց անոր առ-  
ջեւ, ու, գանկը երկու ձեռքերուն  
մէջ սեղմած, սկսաւ զայն գիտել սե-  
ւեռական նայուածքով:

Որմախորչին մէջէն կանթեղ մը  
իւր կիսամեռ ցուրը կը գողգողացնէր  
բանասխուցին մթին պատերուն վը-  
րայ՝ մարդուն ստուերին հետ խաղա-  
լով, քմահաճ այլանդակութիւններ  
տալով անոր: Դուրսը գեկտեմբերի  
ցուրտ քամին, խուլ գարալումով,  
աւելի ողբագին կը դարձնէր հիմակ  
ներսի եղերական լուռութիւնը:

Բանտարկեալը, իր մտախոհ նըս-

տուածքին մէջ արձանացած, կը շա-  
րունակէր պշնուլ նամակը, որ գեա-  
նամած կը մնար:

Յանկարծ անթարթ աչուըներուն  
խորունկէն երկու արցունքներ կա-  
թեցին նամակին վրայ. երիտասար-  
դը, հիասթափ, թոթուեց իր դուրսը  
զոր երկայն գոռը մագեր կը դար-  
ձարէին, ջղուտ շարժումով մը առաւ  
նամակը գետնէն, եւ ցած լիկ խուցին  
կիսանուաղ լուսաւորութեանը մէջ  
ցցուեցաւ իր երկար ու աղուոր հա-  
սակը:

— Խեղճ Աշխէն, մրմոց:

Ու մտեհնալով խուցին դրանը,  
մասներովը թեթեւօրէն զարկաւ ա-  
նոր: Երիտասարդը ականջ դրաւ.  
ձայն չիկար. սպասեց քիչ մը. յետոյ  
նորէն զարկաւ: Դուրսը ծանր քայ-  
լափոխ մը թնդաց: Վայրկեան մը ետ-  
քը, դուռը բացուեցաւ՝ սեղի տալով  
խոժոռ ու հետո զէմքի մը, զոր խըռ-  
ուացած ալեխառն մօրուք մը աւելի  
կը գաժանցնէր:

Երիտասարդը չսպասեց որ մարդը  
ներս մտնէ. անոր երկնցուց ձեռքը  
բռնած պահարանը:

— Երգմանդ տէ՛րն ես, Ալի աղա:  
Ահաւասիկ:

Բանտապահը, առանց վարանելու,  
նոյն իսկ սեսակ մը սրտառուչ փութ-  
կոտութեամբ խլեց թուղթը, զոր  
անմիջապէս անհետացուց իր շապի-  
կին ձեղքին մէջ:

— Անհոգ եղիր, տղաս, ըսաւ ցած  
ու զգուշաւոր ձայնով մը եւ խոկոյն  
դուռը փակելով անյայտ եղաւ նըր-  
բանքքին մթութեանը մէջ:

Երիտասարդը, սփոփանքի խորունկ,  
սրտապատար հառաչանք մը արձակեց  
ու գրեթէ ինկաւ փուռեցաւ գետինը,  
մինչ որմախորչին կանթեղը, հոգե-

վարք ցուարձակումով, կը քթթէր պատերուն վրայ այն ցնցող սարսուռներուն պէս որոնք մահամերձին մարմինը կը թոթուեն:

\* \* \*

Հետեւեալ օրը, կանուխ, Ս... քաղաքին հրապարակին վրայ, ամբոխը, անդուծ եւ հետաքրքիր, անյագ նայուածներով կը ծածկէր օդին մէջ տատանող մարմին մը: Մարդ մը կախուած էր:

Յեղափոխական մըն էր ան, Գարեգին Սուրմաքեան, հայկական դատին ամենէն խիզախ, գործունեայ եւ կատաղի առաքեալներէն մէկը, զոր վատ մատնութիւն մը ձգած էր կառավարութեան ձեռքը:

Հազիւ երկու ամիս առաջ բաժնուած էր ան իր հօրենական տունէն, անցուած քսան երկու տարիներու հանդարտ ու անմշուշ կենցաղը մէկէն ի մէկ, յանկարծական թափով մը խզելով, հայրենիքի հողին վրայ հոսող արեան կծու հոտէն խելայեղ:

Անքուն գիշերներ անցուցած էր, ապագայ կըքոտ ու փոթորկալից կեանքի մը անձկանքներովը ալիկոծ, տարտամօրէն ծրագրուած յանդգնութիւններու եւ կռուելու պայքարելու ապերասան խանդավառութեան մը յաճախանքին ջղագրգռութեանցը մէջ յարատեւօրէն ցնցուած: Ամէն բան, վայելք, ցնծութիւն, սէր վրայ տալու մարմնջովը կերէր կը մըկէր: Ուրոշումէն գործադրութեան անցնելու կեղիչ շրջանին տառապանքները կը տանէր հիմա:

Ամէն բան վրայ տալ, այո, բայց ի՞նչ ըսել իր գերուած կապտուած սրտին, զոր Աշխէն, իր կապոյտ աչ-

ուրներուն հրայրքոտ թովչութիւնովը ու միամիտ պարմանուհիի քաղցրութիւնովը առլցած էր այնքան բուռն կերպով: Իր միտքը չարչրկող պայքարի խօլ ծրագիրներուն քով յանկարծ կուգար կը ցցուէր Աշխէնին անմեղունակ դէմքը, նշածու աչքերուն շոյող գգուող սեւեռանքովը, կեանքոտ շրթներուն համբուրուէտ շքեղութեամբը: Բաժնուի՛լ այդ հրեշտակէն, որ ջահի մը պէս իր թաղձոտ սրտին մոայլութիւնը կը լուսաւորէր:

Գարեգին երկար ատեն տառապեցաւ իր հողին բզկտող այս հակընդդէմ զգացումներուն լլկանքին մէջ: Հարիւր անգամ՝ մտքով յօրինած ծրագիրները պատուեց նետեց, նորեր գնելով անոնց տեղ, զանոնք ալ կոխկռտելով դարձեալ, մինչև որ վերջապէս օրին մէկը, ինքիւր դէմ դօտակնդած, վարանումներէն ամօթահար, մեծագոյն իտէալին վսեմութեան առջև յաղթահարուած, վերջնական ծրագիրը պատրաստեց, սուրբ ուխտի կնիքը գրաւ անոր տակ:

Յեղափոխական մարտի գոռ կրկէսին մէջ պիտի նետուէր գլխիվայր:

Եւ Աշխէնը: Օ՛, պիտի զոհէր զայն ալ, մանաւանդ զանիկա, որպէս զի զոհողութիւնը մեծ ըլլալով՝ խղճի, կամքի վարձատրութիւնը աւելի մեծ ըլլար:

Աշնան վերջերը, լուսնկայ գիշեր մը իր բաժանման գիշերը եղաւ: Գընաց գտաւ իր կուռքը, տարտա զայն քաղաքէն դուրս, դաշտի անդորրութեան մէջ: Երկար սուեց բացատրութիւնը. խեղճ աղջիկը լացաւ. բայց կարելի՛ էր ընդդիմանալ Գարեգինի որոշման, որ իրենց երկուքին ապագան պատրաստելու կը նկրտէր լոկ: Ու Գարեգին կը խաբէր Աշխէնը, ը-

սերով անոր թէ՛ միջավայրէն գփգո՞ւ պիտի երթար աւելի լայն ապարէզներու մէջ նետուիլ, շահաւէտ գործերու ձեռնարկել, վերջապէս նիւթական կարեւոր դիրքի մը տիրանալ՝ սրտի ու սիրոյ ապագայ երջանկութեան քով ապրելու հեշտութիւնն ալ ունենալու համար մանաւանդ: Մանկամարդուհին, իր սիրոյ միամիտ հաւատքին մէջէն կրէնդնամարէր յայտնուած գաղափարին հրապոյրը, որ իր անփորձ աղջկան սնամասութիւնը կը զգուէր այնքան:

Բաժանման գծնդակ բոպէի վերջին դիրքընդխառնումի տագնապին մէջ, Աշխէն չէր մոռցած իր սիրեցեակին յիշեցնելու իրենց վաղեմի սովորութիւնը, որ էր ամէն կազանդի մէջ մէկ խորհրդաւոր նուէրով փոխադարձաբար հրճուեցնել զիրար, կարծես նիւթական առհաւատչեացով մըն ալ նուիրագործելու համար իրենց մաքուր ու անխարդախ սէրը: Եւ իրօք, մանկամարդուհին մասնաւոր պշրանք մը եւ անձին մէկ դրոշմը միշտ գրած էր այդ նուէրին մէջ զոր ամէն տարեգրելու սովոր էր ընել իր խօսեցեակին՝ անկէց ստացածին վրայ նոյն անուկընկալը դանալու յոյսով:

— Չե՛մ մոռնար կաղընդչէքդ:

Եւ Մութին մէջ հեռացած գացած էր Գարեգին, հէք աղջկան արցունքոտ աչերէն ու հեծեծանքներէն հեռապնդուած, ինքզինքը ա՛լ հիմակ այնքան թեթեւ զգալով որ կուզէր թռչիլ, խոյանալ դէպ ի մոլեգնօրէն ըզձացուած նպատակը, դէպ ի հայրենիքի փրկութեան մեծ ու վսեմ գործը:

Սուբմաքեան շուհը առած էր Հաստտանի Ս... քաղաքը, ու շուտ յարաբերութիւն հաստատած էր յեղափոխական մարմիններու հետ: Իր ար-

տաքին ազդող երեւոյթը, տաք ու ներշնչող խօսուածքը, ցոյց տուած եռանդն ու գործունէութիւնը շուտով զգացուցած էին իր կարեւորութիւնն ու իր ուժ մը ըլլալը: Իր աշխուժն ու խանդավառ անձնութիւնը հաղորդական եղած էին, տեղւոյն մէջ յեղափոխութեան գործին արտասովոր զարկ մը տալով եւ գործնական արգիւնքներ ձեռք բերելով, որոնք սակայն շատ չանցած կառավարութեան ուշադրութիւնը գրաւած էին: Տե՛ս՝ — դաշոյնը արդէն ներկուած էր վատ շուէրներու արիւնով: Հայ յեղափոխութեան արհաւիրքին սկզբնաւորութիւնն էր:

Սուբմաքեան, մտքով, սրտով ու հոգեով յեղափոխութեան նուիրուած, ա՛լ գրեթէ մոռցեր էր առն տեղ, սէր, ապագայ, ամէն բան: Իր նոր կեանքին եռացկոտութեանը մէջ եթէ երբեմն Աշխէնի նազելական անուշ գէժքին ստուերը յանկարծ կուգար իր աչքերը խողտացնել, շուտով սակայն անյայտ կըլլար ան, բոպէական փրոզկուծ մը ատաջ բերելով միայն:

Եւ երբեմն անոր վերջին բառը կուգար ներգաշնակօրէն թրթուալ իր ականջին. « կաղընդչէ՛քս »:

Սակայն Ս... քաղաքը հասնելէն իբր երեք ամիս ետքը, օր մը յանկարծ բռնուած էր Սուբմաքեան, ու ջախջախիչ ապացոյցներ, անհերքելի խոստովանութիւններ ձերբակալուած ուրիշ ընկերներու կողմէ՛ լմնցուցած էին իր գործը, ու մահուան դատապարտուած էր:

\*  
\* \*

Չի՞զ շուանին ծայրէն հիմա կը կախուէր Գարեգին Սուբմաքեանի երկար հասակը, զուռ խարտեաչ մա-

վերով զարգարուն գլուխը կուրծքին հակած, աչքերը, կեանքով ու բոցով լեցուն աչքերը զոց, գէմքը հանդարտ գեղնութեամբ մը վարապուրուած:

Երեւոյն, վայրագ ու վրէժխնդիր, գիւային ժպիտի մը տակէն ակուսները կը ցուցունէր հայրենասիրութեան այդ գերագոյն խորհրդանշանին, որուն վրայ ամբողջ ազգ մը իր տառապանքը կ'աղաղակէր աշխարհի:

Մէկը միայն, ան ալ թուրք մը, կախաղանին մօտերը կեցած տրտում տխուր, մերթ իր աչքերը կը վերցնէր գէպի այդ գիակը, զոր կը գիտէր զանն արգահատանքի նայուածքով մը: Ատեն ատեն, կը մըմնջէր:

— Են՛դճ տղայ, պիտի բռնեմ խոտումս:

Երբոր նոյն գիշերը գիակը վար առին, ոչ ոք կըրցաւ նշմարել թէ միեւնոյն մարդը, այդ գործողութեան օգնողներէն մէկը, զանակով մը կտրեց կախաղանին չուանէն փոքր մաս մը եւ զգուշութեամբ պահեց զայն իր գրպանին մէջ:

Այս մարդը Ալի աղան էր, Սուրմաքեանի ձեր բանասպահը:

\* \* \*

Նոր տարի էր: Աշխէն, չորս ամիսէ ի վեր իր խօսեցեակէն առանց ո եւ է լուրի, այդ գերագոյն օրուան կըստպատէր անկէց ընդունելու համար խոտացուած նուէրը: Իր աչքերուն ժպիտին տեղ հիմակ վեշտի տենդը կը վառէր. այտերուն գունագեղ թաւիչը իր առաջուան փայլն ու ողորկութիւնը կորուսած էր ա՛լ: Կը տառապէր թշուառ աղջիկը՝ լքուած, յու-

տախարուած աղջիկներու կրծող տառապանքովը:

Պատուհանը նստած, սպասումի թմրութեան մէջ մտամոլոր, ան կը յուսար յանկարծ անանկ սպասուած նուէրը, որուն լուր պիտի հարցնէր իր սրտին ախրոջմէն, ինչպէս հայ նժդէնը որ « մեր աշխարհէն խապրիկ մը կը հարցնէ կուռնիկին »:

Կաղաքը նոր տարին կը սօնէր խօջնծումով: Յրգի ու զինարբուքի խնդութիւնը կը փութէր փողոցները ու կը բարձրանար սպասող աղջկան քով մինչեւ, անոր ցաւը հրահրելով, սիրտը յօշոտելով:


Իր զգայազիրկ թմրութեան մէջ նոյն խակ չառաւ փոքր տղան որ նամակ մը նճսելէ յետոյ իր գողը՝ զուրս թաւ սենեակէն: Աշխէն, խելարեւած, բռնեց նամակը եւ անգամ մը փողոց նայելէ յետոյ կարծելով որ անկէց ներս նստուած էր, բացաւ պահարանը, ու երբոր թոթուեց զայն՝ թղթիկ մը ու բարակ չուանի մը կտորը զուրս խնկան մէջէն:

Աշխէն առաւ թղթիկը եւ խնդրի պէս կարդաց սա սողերը մատիտով գրուած.

« Պաշտելիս, ներսակ պիտի գանես » չուանի մը կտորը, որ զիս խղզող » կախաղանի հանդոցին մէկ մասն » է: Լանջքիդ տակ վառող սիրոյ կը » բակին մէջ նետէ զայն, որպէս զի » ազգային վրէժխնդրութեան բոց » մը գառնայ ինն »:

« Ահա՛ կաղընդչէքս »: « Գ. Ս. »

Ե. ԱՐՄԱՔԷՇԵԱՆԼԵԱՆ



ՃԵՐՄԱԿ ՀԱՐՍ

(ՌՕՆՏՕ)

Ճերմա՛կ հարս, ձիւնէ մահ բզգեցար,  
Հարս գացիր ծաղկաբոյր եղեմին.  
Հրմայեց երազը հագից յար  
Վարդերուն որ երբեք չի բռնմին.  
Հարս ելար, Եււեանի՛ն սիրահար:

Յրնցեց քեզ, քրնարի իբրեւ յար,  
Կեանքին բիրտ յայգերուն ստո բամբին.  
Հոգիդ ցաւ մը ունէր ոգեվար...

Ճերմա՛կ հարս:

Հսպիսակ յագաղիդ քով մայր,  
Թօօնեցաւ ծաղիկն ալ լեմոնին.  
Սեցունքիս հրդեհը սիրավառ  
Չայրե՛ց հոն, նուրբ հոգեակդ անմարմին.  
... .., լո՛յս անեւչ՝ աչքիս մար,  
Ճերմա՛կ հարս:

Ս.ԲԱՄ

ՕՐՈՒԱՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վառնա, 12 Ապրիլ 1900

Կարմիր Չատիկ մըն ալ անցաւ  
մեր գլխէն՝ իր բոլոր հանդիսաւու-  
րութեամբ, մինչդեռ կը մնան աա-  
կաւին, մեր սեւ բազդէն, կարմիր  
օրերը անհուն նախճիրներու, իրենց  
բոլոր արհաւիրքներով:

Ամէնքս ալ, բայց առանց բացա-  
ռութեան ամէնքս ալ, լիառատ վա-  
յելեցինք կարմիր Չատիկը, ա-

ռանց բնաւ խորհելու կարմիր օրե-  
րու զոհերուն վրայ, որբերուն և  
որբեւայրիներուն վրայ, որոնք հոն,  
չատ հեռո՛ւն, ծովէն ու լեռներէն  
անդին, իրենց հայրերուն ու այրե-  
րուն արիւնովը սամուկ ու կակուզ-  
ցած ժայռը կը կրծեն հացի տեղ,  
զոր մուրացին մենէ ու չի կրցան  
ստանալ: Ի՛նչ անկում՝ ցեղային  
արժանապատուութեան ու . . . բա-  
րեպաշտիկ զգացումներու, որոնց-  
մով պնճազարդուած (?) մենէ շա-  
տերը ներկայացան Աստուծոյ խո-  
րանին առջեւ, ուրկէ կը ճառա-  
գայթեն Սէրը և Գթութիւնը, լու-  
սաշող ու ճաճանչաւէա, դէպ ի հա-  
մարէն զրկուածները, դէպ ի աա-  
րարողներն ու անժառանգները:  
Ի՛նչ կրծող ու կծող հեգնու-  
թիւն . . . :

Մեզմէ քանի՞ հոգի մտածեց  
գոնէ մէկ Ֆրանք — չօրէկի մը  
գինը, երեւակայեցէք — զեղջել իր  
տօնական ծախքերէն, իր հաճոյք-  
ներուն ու վայելքներուն համար  
ծախսուած գրամէն, ու զայն յառ-  
կայնել, իբրեւ հացագին, մեր սա-  
վատանջ որբերուն ու այրիներուն:  
Ու ենթադրե՛լ որ այս պարզ մը-  
տածումը, այս չնչին զոհողու-  
թիւնը պիտի կլնար արտագրել  
առնուազն քանի մը հազար Ֆրանք,  
որոնք, գէթ առ այժմ, պիտի բա-  
ւէին . . . ամոքելու այնքան անիրա-  
ւութիւններով ծանրաբեռնուած  
մեր խիղճերը:

\*  
\* \*  
\* \*

Քանի որ հաճոյքներու վրոյ կը խօսիմ, չեմ կրնար զանց ընել գերազանցապէս սրտապարար, շինող ու բարոյացուցիչ այն հաճոյքը՝ զոր ունեցանք՝ ի տես մարմնամարդիկ խումբերուն, որոնք Պուլիարիոյ զանազան քաղաքներէն հոս հաւաքուեցան, ցուցադրելու համար երկտասարդ ցեղի մը կորովը, առուգութիւնը և կենսական ուժը: Չը պիտի նկարագրեմ այն խանդավառ ընդունելութիւնը՝ որուն առտրկայ եղան անոնք, ոչ ալ պիտի յիշեմ ծափերը՝ զորս խլեցին հանդիսականներէն, որովհետեւ ատոնք սովորական դէպքեր են նմանօրինակ պարագաներու մէջ:

Իրիկուան դէմ, սպիւն, արամադրութիւններս բոլորովին փոխուած էին. զգացած բովանդակ հաճոյքս թունալից դառնութեան մը տեղի տուած էր, չար նախանձը կը կրծէր սիրտս ու դժուարու զըստ պուած կատաղութեան մը ժահրը կ'այրէր, կը տոչորէր շրթներն, երբ քարացած ու անշարժ, կը դիտէի հանդիսաւոր անցքը այդ խումբերուն, իրենց զանազան տարազներով, իրենց դրօշակներովն ու վերտառութիւններովը, իրենց ներդաշնակ երգերովն ու սուռնական, համաչափ քալուածքով՝ զուարթ, կայսա աւ և յուսալից:

Ու բոլոր այդ խլացուցիչ աղմուկներուն, հոծ ու բազմերանդ

ամբոխին այդ կեցցէներուն մէջէն՝ կարծեցի ընդնշմուրել անջինջ յատակները մեր ջնջուած փառքերուն: Յիշեցի որ մենք ալ ճիշդ միեւնոյն հանդիսաւորութեամբ ու միեւնոյն եռանդով կը տոնէինք մեր Ազգ. Սահմանադրութեան ստորագործը, ու ես, մեր գիւղին կալուածներէն մին, ամենէն առաջ կը վազէի նաւամատոյց, հանդիսավայրէն վերագործող մեր թափօրին երեսն ի վեր նետելու համար իմ սուր կեցցէներս, ու դրօշակիւր խենդ Գարրէշին սրունքներուն մէջէն իշնալով, ելլալով, երգելով ու պուռալով՝ կ'առաջնորդէի խումբը մինչեւ լեռան քաղինսն, ուր մեր էսկաւճ ու հոյսարսա սահմանադրականները, խենդ ու խելաւ խօսակցութիւններով, յաւակնոտ պուռքատուքներով կը շարունակէին տօնել Ազգ. Սահմանադրութիւնը . . . օղիի դաւաթներու մէջ, ինչպէս անդին, հանդիսավայրը, մեր գրագէտները, ցերեկին, տօնած էին զայն իրենց . . . ճառերով:

Այո, սիրելի ընթերցող, մեր ամբողջ ազգային կեանքը այս երբեակ կուռանին շուրջը դարձած է. յաւակնոտ պուռքատուքներ, օղիի դաւաթներ և ուռուցիկ ճառեր. անոնք կը կազմէին միակ լծակը մեր ազգային գործերուն:

Մեր ցեղին յատկութիւններուն ամենէն տիրական երեւոյթներէն մէկն է սա պարագան թէ՛ իրարու

յաջորդող տարիներու այն երկար շրջանին մէջ, որ մենք համեմատական կեղծ ազատութիւն մը կը վայելէինք, հայկական խնդիրը չսկսած, մանաւանդ Պոլսոյ մէջ, հարիւրաւոր ճառախօսներէն ո՛չ մին ամենատարրական հեռաստեութիւնն ունեցած է առջարկելու որ մտրմինը կողմող, մտրող — հետեւաբար մտքի ու կամքի անկախութիւն ներշնչող — ընկերութիւններ ալ կողմունի մեր մէջ, որոնք տարին անգամ մը, Սահմանադրութեան տարեդարձին առթիւ, ժամողրութիւն տային իրարու, Ազգային Հիւանդանոցի պարտեզը, ու հոն ցուցադրէին հասարակութեան, որ այլեւս պիտի դադրէր թանայիրճի ամբօխ մը ըլլալէ, ցեղին ուժը, կորսողն ու յանդերձութիւնը: Այն ատեն խենդ Գաբրէլները, զէվզէկ ու հովարոտ Սահմանադրականները և ճառճի տիրացուները ինքնին պիտի անհետանային, ու մենք շատոնց փրկուած պիտի ըլլայինք մանաւանդ այս վերջիններէն, որոնք տակաւին այնքան մեծ բաժին մը ունին նոր սերունդին դաստիարակութեան գործին մէջ:

\*  
\* \*

Նոր սերունդին դաստիարակութեան գործը . . . : Brrr!... faut pas aborder celle-là. ամենէն հրատապ, ու եթէ կ'ուզէք, ամենէն հրաշէկ խնդիրներէն մէկն է: Անով զբաղուելու համար Պիզմարքի մը հեռա-

տեսութիւնը և Մօլթքէի մը ռազմագիտութիւնն ունենալու է, ապա թէ ոչ թաղական, հոգաբարձու, վարժապետ, ծնողք, ամէն բան իրար կ'անցնի. ժողովուրդը կուտակցութիւններու կը բաժնուի, դպրոցները կը դոցունին, ու վարժապետը կը մնայ առանց ամսակաւնի, աշակերտն ալ առանց դպրոցի. իսկ եթէ խմբագիր ես, թերթի ալ կը մնայ առանց բաժանորդի, ինչ որ հրատարակչ վիճակ մը չէ անշուշտ:

Ու քանի որ զաստիարակութեան վրայ կը խափնք, ներեցէք որ պըզտիկ տեսարան մը ներկայացնեմ ձեզ, որպէս զի զուարճանալով հանդերձ դաղափար մը կազմէր թէ տակաւին մեր ծնողքներէն շատերը ինչպէ՞ս կ'ըմբռնեն դաստիարակութեան գործը:

Բարեկամներէս մէկը այցելութեան կ'երթայ տեղ մը: Տան աիկինը, որ մէկ երկու տարի մայրապետներուն քով յաճախած ըլլալուն պատճառաւ քանի մը բառ ֆուսներէն կը կտորտէ եղեր, ցուցադրելու համար իր պարտիկ զուկին հսկայաքայլ յառաջդիմութիւնը ադ ընդունի մէջ՝ անոր արտասանել կուտայ Ave Maria աղօթքը և . . . լսեցէք, խոնարհել կուտայ aller բայը, իր ամէն ժամանակներուն մէջ, բայց միշտ միևնոյն ձեւով, և ինչպէս կը գուշակէք, հաւանականաբար միևնոյն ուղղա-

գրութեամբ: Ու բարեկամիս անտարբերութեան հանդէպ՝ ի՛նք կըսուի ծախահարել մայրապետներուն շնորհիւ ձեռք բերուած այս հիանալի արդիւնքը:

Այս դէպքը աչքիս առջեւ կը պատկերացնէ ապուշ դէմքը ընկերներէս մէկուն ուր, գողահար ու սորսափած, տիրացու Եզրայիին հասաւ դուռը մինչև մագական ազդեցութեանը սակ, բոլորովին նոր եղանակ մը ընտրեց հարմար համար թան բառը՝ ներքեակայէք անշուշտ որ այդ գիւրին եղանակը կը կայանար ուղղակի մինչև գործիական՝ թան բառը կրկնելուն մէջ, առանց հոլովանիչի, ինչպէս խնարհած էր ասանտիկնոջ աղան aller բայը, սա տարբերութեամբ միայն՝ որ տիրացու Եզրայի, փոխանակ ծախահարերը իր շնորհիւ ձեռք բերուած այս ոչ նուազ հիանալի արդիւնքը՝ օրհնեալ գաւազանը վերցընելով ի՛նք սկսաւ հարմար այդ բառը՝ խեղճ ընկերոջս ուսերուն ու քամակին վրայ, ի՛նք ալ առանց հոլովանիչի թէև, բայց outrageusement գիւրուսոյց եղանակով մը: Ու եթէ բաւ կը յիշեմ, գոնէ ուշուականը և սեռականը ճշգիւ կը համապատասխանէին գաւազանին բաթ-բաթ, չաթ-չաթ կրկնակի ձայներուն: Աւելորդ է ըսել որ գործիականը ընկերս ինք գաւա, կարծեմ՝ ֆրամպրօնի սճով միավանկ բառ մը, զոր պատուելիին երեւին

նետելով փախաւ գպրոցէն, ու ա՛լ չի վերագարձաւ:

Որմէ ես ալ կը հետեւցնեմ թէ մեր փոքրիկ ազոյ ու աղջկանց համար ֆուստայի աղբիկներուն ու քարիկներուն ուսուցանելու արդի մէթոտը ճշգիւ կը համապատասխանէ Քրիստոսի ներկայ թուականէն 20-25 տարի առաջ մեր տիրացու Եզրայիներուն ի գործ դրած մանկավարժական մէթոտին: Նամանութիւնը, ինչպէս կը տեսնէք, ո՛ր և է առարկա թիւն չի վերցնել, aller բային խոնարհումը կամ թան բառին հարմարումը, Ave Maria՛ն կամ Նարեկացիէն գլուխ մը աղօթք, սրանց ոչ մէկէն ու ոչ միւսէն բան մը կրնան հասկնալ մեր աղաքը:

ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## ՄԵՐ ՈՐԲԵՐԸ

Գովեստի ու խրախուսանքի արժանի է նախաձեռնութիւնն այն անձերուն որոնք սքանչելի գաղափարը ունեցան Վառնայի մէջ հիմնելու որբախնամ մարմին մը: Մեր որբերուն ողբալի հարցին վրայ ծանրանալն աւելորդ է հոս, վասն զի չիկայ հայ մը որ չգիտնայ զայն: Արդէն իսկ որբախնամ մարմինը կազմուած է հետեւեալ անձերէն. Պ.Պ. Ամիրխանեանց, Յ. Պարսամեան, Յ. Ճանկիւլեան, Յ. Ազամեան: Որբախնամ Ընկերութեան նպատակը պիտի ըլլայ կարելի եղած թուով որբեր պահել Վարազայ որբանոցին մէջ:

Омгосорнакո Ի. Դրացլեսո  
Սեւաստա «Օրբանակո» — Երբա.

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Հաստատում 1898 Սեպտեմբեր 1 ին

ՎԱՌՆԱ

Կրթական Նախարարութեան 11128 թիւ արտոնագրով

Կ'ընդունուին գիշնթիկ աշակերաններ՝ գահացուցիչ պայմաններով :

Առողջ սնունդ , կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք :

Ուսմանց եւ գիտութեանց ամէն ճիւղեր կ'աւանդուին :

Օտար լեզուներէն պարտաւորիչ են պուլկարերէնը եւ ֆրանսերէնը : Փափաքողները կրնան հետեւիլ նաեւ անգլիերէնի կամ գերմաներէնի դասընթացքին :

Ձութակի եւ դաշնակի դասեր ալ կը տրուին մասնաւոր վճարումներով :

Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար՝ դիմել հիմնադիր-անօրէնին , հետեւեալ հասցեով՝

GRON MICAËLIAN

PENSIONNAT ARMÉNIEN

VARNA (Bulgarie)

## ՓՈՐԱԳՐԻՉ

ՅԱԿՈՅ ՄՈՍԿՈՅԵԱՆ

Կը պատրաստէ ամէն տեսակ զմուռ եւ լուսանկարէ փորագրութիւն . տօսախի , ոսկիի , արծաթի , պողպատի եւ ամէն տեսակ մետաղներու վրայ գեղարուեստօրէն կը փորագրէ պատկերներ եւ զարդանկարներ : Դիմել Արեւելեան Տպարան :

Ուրիչ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշտութեամբ եւ փութով կը կատարուին :

# ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Երկրորդ քաղ, Շիրյեճախ փողոց, (Սագաղը չեշմեի կից)

Կը ապագրուին հայերէն, պուլկարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեատման, հասցէատման, հարսանեկան հրատիրագիր, ազդարարութիւն, նամակագրութիւն, պահարան, մահագր, վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք, լրագիր, եւ այլն:

Գունաւոր եւ ոսկեղօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ տառեր եւ մասնաւոր գործիքներ կը զանուին:

ՄԵԾ ԽՆԱՄԲԵԻ ՆՍԳՐՈՒԹԻՒՆ  
ԳԻՆԵՐԸ ՅՈՅԾ ԳԻՒՐՄԱՍՏՅԵԼԻ

Ուրիշ ֆաղաֆներէ եկած յանձնարարութիւններ նշուած քիւնքի փոքով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).